

## ԿՈՆՎԵՆՑԻԱ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԻՏՎԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԵՎԱՍՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՈՒՄԸ ԲԱՑԱՌԵԼՈՒ ԵՎ ՀԱՐԿԵՐԻ ԿՃԱՐՈՒՄԻՑ ԽՈՒՍԱՓԵԼԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետությունը և Լիտվայի Հանրապետությունը, ղեկավարվելով երկու Պայմանավորվող Պետությունների միջև տնտեսական, գիտական, տեխնիկական ու մշակութային համագործակցությունը զարգացնելու և ամրապնդելու ձգտումով և եկամուտների ու գույքի հարկերի առնչությամբ կրկնակի հարկումը բացառելու ու հարկերի վճարումից խուսափելը կանխելու և հարկային խտրականություն թույլ չտալու նպատակով որոշեցին կնքել սույն Կոնվենցիան և պայմանավորվեցին ներքոհիշյալի մասին.

#### ԳԼՈՒԽ I

#### ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ

##### Նոդված 1

#### ԱՆՁԻՆՔ, ՈՒՄ ՆԿԱՏՄԱՍԲ ԿԻՐԱՌՎՈՒՄ Է ԿՈՆՎԵՆՑԻԱՆ

Սույն Կոնվենցիան կիրառվում է Պայմանավորվող Պետություններից մեկի կամ երկուսի ռեզիդենտներ հանդիսացող անձանց նկատմամբ:

##### Նոդված 2

#### ԸՆԴԳՐԿՎՈՂ ՀԱՐԿԵՐ

- Սույն Կոնվենցիան կիրառվում է Պայմանավորվող Պետության կամ նրա տեղական իշխանության մարմինների կողմից եկամուտներից ու գույքից գանձվող հարկերի նկատմամբ, անկախ դրանց գանձման եղանակից:
- Եկամուտից ու գույքից գանձվող հարկեր են համարվում եկամուտների ընդհանուր գումարից, գույքի ընդհանուր գումարից կամ եկամուտի ու գույքի առանձին տարրերից գանձվող բոլոր հարկերը, ներառյալ շարժական կամ անշարժ գույքի օտարումից առաջացած եկամուտներից, ինչպես նաև գույքի հավելաճից գանձվող հարկերը:
- Կոնվենցիան տարածվում է, մասնավորապես, հետևյալ գործող հարկերի վրա՝
  - Հայաստանի դեպքում՝
    - շահութահարկ,
    - եկամտահարկ,
    - գույքահարկ,
    - հողի հարկ,(հետագայում անվանվող ինչպես «Հայաստանի հարկ»):
  - Լիտվայի դեպքում՝
    - հարկ իրավաբանական անձանց շահույթից,

- (ii) հարկ ֆիզիկական անձանց եկամտից,
- (iii) հարկ ձեռնարկություններից, որոնք օգտագործում են պետական սեփականություն հանդիսացող գույքը,
- (iv) հարկ անշարժ գույքից,

(հետագայում անվանվող ինչպես «Լիտվայի հարկ»):

4. Կոնվենցիան կիրառվում է նաև եկամտից ու գույքից զանձվող բոլոր նույնական կամ համանման հարկերի նկատմամբ, որոնք կգանձվեն ի լրումն գործող հարկերի կամ դրանց փոխարեն սույն Կոնվենցիայի ստորագրման օրվանից հետո: Պայմանավորվող Պետությունների իրավասու մարմինները կիրազեկեն միմյանց իրենց համապատասխան հարկային օրենքներում կատարված սկզբունքային փոփոխությունների մասին:

## **ՉԼՈՒՄ II ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ**

### **Նոդված 3 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ**

1. Սույն Կոնվենցիայի նպատակների համար, եթե այլ բան չի բխում ենթատեքստից.
- a) «Պայմանավորվող Պետություն» և «մյուս Պայմանավորվող Պետություն» տերմինները, ենթատեքստից կախված, նշանակում են Հայաստան կամ Լիտվա,
  - b) «Հայաստան» տերմինը նշանակում է Հայաստանի Հանրապետություն և երբ օգտագործվում է աշխարհագրական իմաստով նշանակում է տարածք, ներառյալ ներքին ջրերը, որի վրա տարածվում են Հայաստանի Հանրապետության ինքնիշխան իրավունքները և իրավագործությունը՝ միջազգային իրավունքի և ներքին օրենսդրությանը համապատասխան,
  - c) «Լիտվա» տերմինը նշանակում է Լիտվայի Հանրապետություն և երբ օգտագործվում է աշխարհագրական իմաստով նշանակում է Լիտվայի Հանրապետության տարածքը և ցանկացած այն գոտին, որը հարակից է Լիտվայի Հանրապետության տարածքային ջրերին, որոնց նկատմամբ Լիտվայի Հանրապետության օրենքներով և համաձայն միջազգային իրավունքի կարող են տարածվել Լիտվայի իրավունքները ծովափի և նրա ջրերի հատակի ու դրանց բնական պաշարների նկատմամբ,
  - d) «անձ» տերմինը ներառում է ֆիզիկական անձ, ընկերություն կամ անձանց ցանկացած այլ միավորում,
  - e) «ընկերություն» տերմինը նշանակում է ցանկացած կորպորատիվ միավորում կամ ցանկացած միավորում, որը հարկման նպատակների համար դիտարկվում է որպես կորպորատիվ,
  - f) «Պայմանավորվող Պետության ձեռնարկություն» և «մյուս Պայմանավորվող Պետության ձեռնարկություն» տերմինները նշանակում են համապատասխանաբար Պայմանավորվող Պետության ռեզիդենտի կողմից ղեկավարվող ձեռնարկություն և մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտի կողմից ղեկավարվող ձեռնարկություն,
  - g) «միջազգային փոխադրում» տերմինը նշանակում է Պայմանավորվող Պետության ձեռնարկության կողմից օդանավով իրականացվող ցանկացած փոխադրում, բացառությամբ երբ օդանավը շահագործվում է բացառապես մյուս Պայմանավորվող Պետությունում գտնվող կետերի միջև,

h) «իրավասու մարմին» տերմինը նշանակում է.

- (i) Հայաստանում՝ Ֆինանսների և էկոնոմիկայի Նախարարը կամ նրա կողմից լիազորված ներկայացուցիչը,
- (ii) Լիտվայում՝ Ֆինանսների Նախարարը կամ նրա կողմից լիազորված ներկայացուցիչը.

i) «ազգային անձ» տերմինը նշանակում է.

- (i) Պայմանավորվող Պետության քաղաքացիություն ունեցող ցանկացած ֆիզիկական անձ,
- (ii) Պայմանավորվող Պետության գործող օրենսդրության հիման վրա այդպիսի կարգավիճակ ստացած ցանկացած իրավաբանական անձ, ընկերակցություն, ասոցիացիա կամ մասնավոր (անհատական) ձեռնարկություն (իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող):

2. Պայմանավորվող Պետության կողմից սույն Կոնվենցիան ցանկացած ժամանակ կիրառելիս նրանում չսահմանված ցանկացած տերմին, եթե այլ բան ենթատեքստից չի հետևում, կունենա այն նշանակությունը, որն այն տվյալ պահին ունի այդ Պետության օրենսդրությամբ այն հարկերի նկատմամբ, որոնց վրա տարածվում է Կոնվենցիան, այդ Պետությունում գործող հարկային օրենքներով սահմանվող յուրաքանչյուր նշանակություն կգերակայի այդ Պետության այլ օրենքներով տերմինին տրվող նշանակության նկատմամբ:

#### **Շոդված 4 ՌԵԶԻԴԵՆՏ**

1. Սույն Կոնվենցիայի նպատակների համար «Պայմանավորվող Պետության ռեզիդենտ» տերմինը նշանակում է ցանկացած անձ, որն այդ Պետության օրենքներով այնտեղ ենթակա է հարկմանը իր բնակության վայրի, գրանցման վայրի, ռեզիդենտության, ղեկավարման մարմնի գտնվելու վայրի կամ ցանկացած այլ համանման չափանիշի հիման վրա: Արտահայտությունը ներառում է նաև այդ Պայմանավորվող Պետության Կառավարությունը և նրա տեղական իշխանության մարմինները: Սակայն, այդ տերմինը չի ներառում ցանկացած անձի, որն այդ Պետությունում ենթակա է հարկման միայն այդ Պետության աղբյուրներից ստացած եկամտի կամ այնտեղ գտնվող գույքի նկատմամբ:
2. Այն դեպքում, երբ առաջին կետի դրույթներին համապատասխան ֆիզիկական անձը հանդիսանում է երկու Պայմանավորվող Պետությունների ռեզիդենտ, նրա կարգավիճակը որոշվում է հետևյալ կերպ.
  - a) նա կհամարվի միայն այն Պետության ռեզիդենտ, որտեղ նա ունի իրեն պատկանող մշտական կացարան, եթե նա երկու Պետություններում էլ ունի իրեն պատկանող մշտական կացարան, ապա նա կհամարվի միայն այն Պետության ռեզիդենտ, որի հետ նրա անձնական և տնտեսական կապերը առավել սերտ են (կենսական շահերի կենտրոն),
  - b) եթե հնարավոր չէ որոշել այն Պետությունը, որտեղ նա ունի կենսական շահերի կենտրոն, կամ եթե նա Պետություններից և ոչ մեկում չունի իրեն պատկանող մշտական կացարան, նա կհամարվի միայն այն Պետության ռեզիդենտը, որտեղ նա սովորաբար բնակվում է,
  - c) եթե նա սովորաբար երկու Պետություններում էլ բնակվում է, կամ եթե նա սովորաբար չի բնակվում դրանցից և ոչ մեկում, նա կհամարվի միայն այն Պետության ռեզիդենտը, որի ազգային անձ է նա հանդիսանում,

- d) եթե նա հանդիսանում է երկու Պետությունների ազգային անձ կամ դրանցից և ոչ մեկի ազգային անձ չի հանդիսանում, ապա Պայմանավորվող Պետությունների իրավասու մարմինները հարյը կլուծեն փոխադարձ համաձայնությամբ:
3. Այն դեպքում, երբ առաջին կետի դրույթների համաձայն ֆիզիկական անձ չհանդիսացող անձը հանդիսանում է երկու Պայմանավորվող Պետությունների ռեզիդենտ, Պայմանավորվող Պետությունների իրավասու մարմինները կձգտեն հարյը լուծել փոխադարձ համաձայնությամբ և կսահմանեն Կոնվենցիայի կիրառման կարգը նման անձանց նկատմամբ:

## **Հոդված 5**

### **ՄՇՏԱԿԱՆ ՐԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ**

1. Սույն Կոնվենցիայի նպատակների համար «մշտական հաստատություն» տերմինը նշանակում է գործունեության մշտական վայր, որի միջոցով ձեռնարկությունը ամբողջությամբ կամ մասամբ իրականացնում է գործունեություն:
2. «Մշտական հաստատություն» տերմինը, մասնավորապես ներառում է.
- a) ղեկավարման վայր,
  - b) մասնաճյուղ,
  - c) գրասենյակ,
  - d) ֆաբրիկա,
  - e) արհեստանոց, և
  - f) հանքահոր, նավթի կամ գազի հորատանք, քարհանք կամ բնական պաշարների հետախուզման կամ արդյունահանման ցանկացած այլ վայր:
3. a) Շինարարական հրապարակը կամ շինարարությունը կամ տեղակայման ծրագիրը կազմում են մշտական հաստատություն միայն եթե նրա տևողությունը գերազանցում է տասներկու ամիսը,
- b) Պայմանավորվող Պետության օֆշորում ծովափի և ջրերի հատակի ու դրանց բնական պաշարների հետախուզման կամ շահագործման հետ կապված գործունեությունը կոնտրակտի որպես այդ Պետությունում տեղակայված մշտական հաստատության միջոցով իրականացվող, եթե նման գործունեությունը իրականացվում է ընդհանուր առմամբ 30 օրը գերազանցող ժամանակահատվածում կամ ժամանակահատվածներում՝ ցանկացած 12 ամսյա ժամկետում:
4. Չնայած սույն Հոդվածի նախորդ դրույթներին, կհամարվի, որ «մշտական հաստատություն» տերմինը չի ներառի.
- a) կառույցների օգտագործումը ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի բացառապես պահպանման, ցուցադրման կամ առաքման նպատակով,
  - b) ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարների պահումը բացառապես պահպանման, ցուցադրման կամ առաքման նպատակով,
  - c) ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարների պահումը բացառապես այլ ձեռնարկության կողմից վերամշակման նպատակով,
  - d) գործունեության մշտական վայրի պահումը ձեռնարկության համար ապրանքների կամ արտադրանքի բացառապես գնման, կամ տեղեկությունների հավաքման նպատակով,
  - e) գործունեության մշտական վայրի պահումը ձեռնարկության համար բացառապես նախապատրաստական կամ օժանդակ բնույթի ցանկացած այլ գործունեության իրականացման նպատակով,

- f) գործունեության մշտական վայրի պահումը բացառապես a)-e) ենթակետերում նշված գործունեության տեսակների ցանկացած համակցության իրականացման համար, պայմանով, որ այդպիսի համակցության արդյունքում առաջացող գործունեության մշտական վայրի համընդհանուր գործունեությունը կրում է նախապատրաստական կամ օժանդակ բնույթ:
5. Չնայած 1 և 2 կետերի դրույթներին, եթե անձը անկախ կարգավիճակով գործակալ չէ, որի մասին խոսվում է 6 կետում, և գործում է ձեռնարկության անունից, ունի և սովորաբար օգտագործում է Պայմանավորվող Պետությունում ձեռնարկության անունից կոնտրակտներ կնքելու իրավասություն, ապա այդ ձեռնարկությունը կոլիտարկվի որպես այդ Պետությունում մշտական հաստատություն ունեցող ցանկացած գործունեության առնչությամբ, որն այդ անձն իրականացնում է ձեռնարկության համար, բացառությամբ, երբ այդ անձի գործունեությունը սահմանափակվում է 4 կետում նշվածով, որն եթե նույնիսկ իրականացվում է գործունեության մշտական վայրի միջոցով, ապա համաձայն այդ կետի դրույթներին այդ գործունեության մշտական վայրը վեր չի ածում մշտական հաստատության:
  6. Ձեռնարկությունը չի դիտարկվում որպես Պայմանավորվող Պետությունում մշտական հաստատություն ունեցող միայն, եթե նա այդ Պետությունում գործունեություն է իրականացնում բրոքերի, գլխավոր կոմիսիոն գործակալի կամ անկախ կարգավիճակով ցանկացած այլ գործակալի միջոցով, պայմանով, որ նման անձինք գործում են իրենց սովորական գործունեության շրջանակներում:
  7. Այն փաստը, որ Պայմանավորվող Պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերությունը վերահսկում է մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերությանը կամ վերահսկվում է նրա կողմից, կամ գործունեություն է իրականացնում այդ մյուս Պետությունում (կամ մշտական հաստատության կամ այլ միջոցով), ինքնին այդ ընկերություններից մեկին չի վերաժում մյուսի մշտական հաստատության:

### **ԳԼՈՒԽ III**

### **ԵԿԱՍՈՒՏԻ ՀԱՐԿՈՒՄԸ**

#### **Շողված 6**

#### **ԵԿԱՍՈՒՏՆԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՑ**

1. Եկամուտները, որոնք Պայմանավորվող Պետության ռեզիդենտը ստանում է մյուս Պայմանավորվող Պետությունում գտնվող անշարժ գույքից (ներառյալ եկամուտ գյուղացիական կամ անտառային տնտեսություններից), կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:
2. «Անշարժ գույք» տերմինը պետք է ունենա այն նշանակությունը, որ նա ունի այն Պայմանավորվող Պետության օրենքով, որտեղ գտնվում է դիտարկվող գույքը: Անշարժ գույքին վերաբերվող սույն Կոմվենցիայի դրույթները պետք է կիրառվեն նաև անշարժ գույքին օժանդակ գույքի, գյուղատնտեսությունում և անտառային տնտեսությունում օգտագործվող անասունների ու սարքավորումների, իրավունքների, որոնց նկատմամբ կիրառվում են հողային սեփականությանը վերաբերվող ընդհանուր օրենսդրության դրույթները, ցանկացած օպիոնի կամ անշարժ գույքի ձեռք բերման նմանատիպ իրավունքի, անշարժ գույքի ու գուժրուկտի և որպես աշխատանք կամ աշխատելու իրավունք դիտարկվող փոփոխական կամ հաստատագրված վճարումների իրավունքների, հանքային պաշարների, աղբյուրների և այլ բնական հանածոների, ծովափի և ջրերի հատակի ու դրանց բնական պաշարների հետախուզումից կամ շահագործումից առաջացող միջոցների համար իրավունքների, ներառյալ նման միջոցներից ստացվող տոկոսների կամ

օգուտի իրավունքները, նկատմամբ: Ծովային, գետային կամ օդային նավերը որպես անշարժ գույք չեն դիտարկվի:

3. 1 կետի դրույթները կկիրառվեն նաև անշարժ գույքի անմիջական օգտագործումից, վարձակալության տրամադրումից կամ անշարժ գույքի ցանկացած այլ ձևով օգտագործումից, ինպես նաև անշարժ գույքի օտարումից ստացված եկամուտների նկատմամբ:
4. Եթե ընկերությունում բաժնետոմսերի կամ այլ կորպորատիվ իրավունքների տիրապետումը այդպիսի բաժնետոմսերի կամ կորպորատիվ իրավունքների սեփականատիրոջը իրավունք է տալիս օգտագործել ընկերությանը պատկանող անշարժ գույքը, ապա անմիջական օգտագործումից, վարձակալության տրամադրումից կամ այդպիսի իրավունքի օգտագործումից ցանկացած այլ ձևով ստացված եկամուտները կարող են հարկվել այն Պայմանավորվող Պետությունում, որտեղ անշարժ գույքը գտնվում է:
5. 1, 3 և 4 կետերի դրույթները կիրառվում են նաև ձեռնարկության անշարժ գույքից առաջացած եկամուտների և անկախ անձնական ծառայություններ մատուցելու համար օգտագործվող անշարժ գույքից առաջացած եկամուտների նկատմամբ:

## **Շողված 7**

### **ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԶԱՆՈՒՅՑ**

1. Պայմանավորվող Պետության ձեռնարկության շահույթը հարկվում է միայն այդ Պետությունում, միայն եթե նման ձեռնարկությունը գործունեություն չի իրականացնում մյուս Պայմանավորվող Պետությունում գտնվող մշտական հաստատության միջոցով: Եթե ձեռնարկությունը գործունեությունը իրականացնում է նշված ձևով, ապա ձեռնարկության շահույթը կարող է հարկվել մյուս Պետությունում, բայց միայն այն մասով, որը վերաբերվում է այդ մշտական հաստատությանը:
2. Հաշվի առնելով 3 կետի դրույթները, երբ Պայմանավորվող Պետության ձեռնարկությունը մյուս Պայմանավորվող Պետությունում գործունեություն է իրականացնում այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, ապա Պայմանավորվող Պետություններից յուրաքանչյուրում այդ մշտական հաստատությանն է վերագրվում այն շահույթը, որ նա կարող էր ստանալ այդպիսի կամ համանման պայմաններում, այդպիսի կամ համանման գործունեությանը զբաղված՝ առանձին և ինքնուրույն ձեռնարկություն լինելու դեպքում, և գործեր ամբողջովին անկախ ձեռնարկությունից, որի մշտական հաստատությունը հանդիսանում է:
3. Մշտական հաստատության շահույթը որոշելիս թույլատրվում է այդպիսի մշտական հաստատության նպատակների համար կատարված ծախսերի հանում, ներառյալ կառավարչական և ընդհանուր վարչական ծախսերը, անկախ այն բանից կատարված են դրանք այն Պետությունում, որտեղ գտնվում է այդ մշտական հաստատությունը, թե նրա սահմաններից դուրս:
4. Եթե Պայմանավորվող Պետությունում մշտական հաստատությանը վերաբերող շահույթի որոշումը ձեռնարկության տարբեր ստորաբաժանումների միջև շահույթի ընդհանուր գումարի համամասնական բաշխման հիման վրա հանդիսանում է սովորական երևույթ, ապա 2 կետում ոչինչ չի խոչընդոտի Պայմանավորվող Պետությանը հարկվող շահույթը հաշվարկել նման բաշխման միջոցով՝ ինչպես սովորաբար ընդհունված է, ընդ որում բաշխման ընտրված եղանակը պետք է համապատասխանի սույն Հոդվածի սկզբունքներին:
5. Ոչ մի շահույթ չի հաշվեգրվի մշտական հաստատությանը այդ մշտական հաստատության կողմից իր ձեռնարկության համար ապրանքների կամ արտադրանքի միայն գնման հիման վրա:

6. Նախորդ կետերի նպատակների համար, մշտական հաստատությանը վերաբերող շահույթը ամեն տարի որոշվում է միևնույն եղանակով, եթե միայն դրա փոփոխման համար հիմնավոր ու բավարար պատճառ չառաջանա:
7. Եթե շահույթը ներառում է եկամտի այնպիսի տեսակներ, որոնց մասին առանձին նշված է սույն Կոնվենցիայի այլ Հոդվածներում, ապա այդ Հոդվածների դրույթները չեն շոշափում սույն Հոդվածի դրույթներին:

### **Հոդված 8**

#### **ՕՂԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏ**

1. Պայմանավորվող Պետության ձեռնարկության շահույթը, ստացված միջազգային փոխադրումներում օդանավի շահագործումից, հարկվում է միայն այդ Պետությունում:
2. 1 կետի դրույթները կիրառվում են նաև այն շահույթի նկատմամբ, որն առաջանում է պոլում, համատեղ գործունեությունում կամ միջազգային շահագործման գործակալությունում մասնակցելուց, բայց միայն այն մասի նկատմամբ, որը վերագրվում է համատեղ գործունեությունում նրա մասնակցությանը:

### **Հոդված 9**

#### **ԱՍՈՑԻԱՅԿԱԾ (ՁՈՒԳՈՐԴԿԱԾ) ԶԵՆՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

1. Այն դեպքում, երբ
  - a) Պայմանավորվող Պետության ձեռնարկությունը ուղղակի կամ անուղղակի կերպով մասնակցում է մյուս Պայմանավորվող Պետության ձեռնարկության կառավարմանը, վերահսկմանը կամ կապիտալում, կամ
  - b) միևնույն անձինք ուղղակի կամ անուղղակի կերպով մասնակցում են Պայմանավորվող Պետության ձեռնարկության և մյուս Պայմանավորվող Պետության ձեռնարկության կառավարմանը, վերահսկմանը կամ կապիտալում,  
և յուրաքանչյուր դեպքում երկու ձեռնարկությունների միջև՝ նրանց առևտրային և ֆինանսական փոխհարաբերություններում, ստեղծվում կամ սահմանվում են պայմաններ, որոնք տարբերվում են այն պայմաններից, որոնք կարող էին լինել երկու անկախ ձեռնարկությունների միջև, ապա ցանկացած շահույթ, որը կարող էր հաշվեգրվել նրանցից մեկին, բայց այդ պայմանների պատճառով չի հաշվեգրվել, կարող է մտցվել այդ ձեռնարկության շահույթի մեջ և համապատասխանաբար հարկվել:
2. Այն դեպքում, երբ Պայմանավորվող Պետությունը այդ Պետության ձեռնարկության հարկվող շահույթի մեջ ներառում է և համապատասխանաբար հարկում շահույթ, որի նկատմամբ մյուս Պայմանավորվող Պետության ձեռնարկությունը այդ մյուս Պետությունում արդեն իսկ ենթարկվել է հարկմանը, և այդպիսով ներառված շահույթն այն շահույթն է, որը հաշվեգրված կլինեք առաջին հիշատակված Պետության ձեռնարկությանը, եթե երկու ձեռնարկությունների միջև փոխհարաբերությունները լինեին նույնպիսին, ինչպես անկախ ձեռնարկությունների միջև, ապա այդ մյուս Պետությունը կկատարի այնուհետև հաշվեգրված այդ շահույթի համապատասխան ճշգրտում: Այդպիսի ճշգրտումը որոշելիս, պատշաճ կերպով հաշվի կառնվեն սույն Կոնվենցիայի մյուս դրույթները, իսկ Պայմանավորվող Պետությունների իրավասու մարմինները անհրաժեշտության դեպքում կխորհրդակցեն միմյանց հետ:

### **Հոդված 10**

#### **ՃԱՆԱԲԱԺԻՆՆԵՐ**

1. Պայմանավորվող Պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերության կողմից մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտին վճարվող շահաբաժինները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Սակայն նման շահաբաժինները կարող են հարկվել նաև այն Պայմանավորվող Պետությունում, որի ռեզիդենտն է համարվում շահաբաժինները վճարող ընկերությունը՝ այդ Պետության օրենքներին համապատասխան, սակայն եթե շահաբաժինների փաստացի սեփականատերը համարվում է մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտ, ապա այդ ձևով գանձվող հարկը չպետք է գերազանցի.
  - a) շահաբաժինների համախառն գումարի 5%-ը, եթե փաստացի սեփականատեր համարվող ընկերությունը (ընկերակցությունից տարբեր) ուղղակի տնօրինում է շահաբաժիններ վճարող ընկերության գույքի առնվազն 25%-ը,
  - b) շահաբաժինների համախառն գումարի 15%-ը՝ մնացած բոլոր դեպքերում:Այս կետը չի շոշափում ընկերության հարկումը այն շահույթի նկատմամբ, որից վճարվում են շահաբաժիններ:
3. «Շահաբաժիններ» տերմինը սույն Հոդվածում կիրառելիս նշանակում է եկամուտ բաժնետոմսերից կամ պարտապահանջ չհանդիսացող՝ շահույթին մասնակցելու իրավունք տվող, այլ իրավունքներից, ինչպես նաև եկամուտ այլ իրավունքներից, որը ենթակա է նույնախի հարկային կարգավորմանը, ինչպես բաժնետոմսերից ստացվող եկամուտ, այն Պետության օրենքներին համապատասխան, որի ռեզիդենտն է հանդիսանում բաշխումն իրականացնող ընկերությունը:
4. 1 և 2 կետերի դրույթները չեն կիրառվում, եթե շահաբաժինների փաստացի սեփականատերը, հանդիսանալով Պայմանավորվող Պետության ռեզիդենտ, գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող Պետությունում, որի ռեզիդենտ է համարվում շահաբաժիններ վճարող ընկերությունը, այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով կամ այդ մյուս Պետությունում անկախ անձնական ծառայություններ է մատուցում այնտեղ գտնվող մշտական բազայի միջոցով, և հողից, որի հետ կապված շահաբաժիններ են վճարվում, հիրավի վերաբերվում է նման մշտական հաստատությանը կամ մշտական բազային: Այդ դեպքում, ելնելով հանգամանքներից, կիրառվում են 7 (Չեռնարկատիրական շահույթ) կամ 14 (Անկախ անձնական ծառայություններ) Հոդվածների դրույթները:
5. Այն դեպքում, երբ Պայմանավորվող Պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերությունը շահույթ կամ եկամուտներ է ստանում մյուս Պայմանավորվող Պետությունից, այդ մյուս Պետությունը կարող է հարկումից լրիվ ազատել այդ ընկերության կողմից վճարվող շահաբաժինները, բացառությամբ եթե այդ շահաբաժինները վճարվում են այդ մյուս Պետության ռեզիդենտին, կամ եթե հողից, որի հետ կապված վճարվում են շահաբաժինները, հիրավի վերաբերվում է այդ մյուս Պետությունում գտնվող մշտական հաստատությանը կամ մշտական բազային, և ընկերության չբաշխված շահույթից հարկեր չգանձել, նույնիսկ եթե շահաբաժինները վճարվում են կամ չբաշխված շահույթը լրիվ կամ մասնակիորեն կազմված են այդ մյուս Պետությունում առաջացող շահույթից կամ եկամտից:

## **Հոդված 11** **ՏՈԿՈՍՆԵՐ**

1. Պայմանավորվող Պետությունում առաջացող և մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտին վճարվող տոկոսները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:
2. Սակայն, այդախի տոկոսները կարող են հարկվել նաև այն Պայմանավորվող Պետությունում, որտեղ դրանք համապատասխան այդ Պետության օրենքներին առաջանում են, բայց եթե տոկոսների փաստացի սեփականատերը համարվում է մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտ, ապա գանձվող հարկը չպետք է գերազանցի տոկոսների համախառն գումարի 10%-ը:



3. Անկախ 2-րդ կետի դրույթներից, Պայմանավորվող Պետությունում առաջացող տոկոսները, որոնք ստանում և փաստորեն տնօրինում է մյուս Պայմանավորվող Պետության Կառավարությունը, ներառյալ իշխանության տեղական մարմինները, Կենտրոնական Բանկը կամ Կառավարության կողմից ամբողջովին տնօրինվող ցանկապատճի մասնական կազմակերպությունը, կամ Կառավարության կողմից երաշխավորվող փոխատվություններից ստացվող տոկոսները, առաջին հիշատակված Պետությունում հարկումից ազատվում են:
4. «Տոկոսներ» տերմինը սույն Հոդվածում կիրառելիս նշանակում է եկամուտ ցանկապատճ տեսակի պարտապահանջներից, անկախ գրավային ապահովումից և պարտապահի շահույթներին մասնակցելու իրավունքի առկայությունից, և մասնավորապես կառավարական արժեթղթերից և պարտատոմսերից կամ փոխառության տոմսերից եկամուտը, ներառյալ այդպիսի արժեթղթերի, պարտատոմսերի կամ փոխառության տոմսերի պարգևավճարներն ու շահումները: Սույն Հոդվածի նպատակների համար ժամկետանց վճարումների դիմաց գանձվող տուգանքները որպես տոկոսներ չեն դիտարկվում:
5. 1, 2 և 3 կետերի դրույթները չեն կիրառվում, եթե տոկոսների փաստացի սեփականատերերը, լինելով Պայմանավորվող Պետության ռեզիդենտ, տոկոսների առաջացման աղբյուր հանդիսացող մյուս Պայմանավորվող Պետությունում գործունեություն է իրականացնում այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, կամ այդ մյուս Պետությունում անկախ անձնական ծառայություններ է մատուցում այնտեղ գտնվող մշտական բազայի միջոցով, և պարտապահանջը, որի հիման վրա տոկոսները վճարվում են, հիրավի վերաբերվում է նման մշտական հաստատությանը կամ մշտական բազային: Այդ դեպքում, ելնելով հանգամանքներից, կիրառվում են 7 (Ձեռնարկատիրական շահույթ) կամ 14 (Անկախ անձնական ծառայություններ) Հոդվածների դրույթները:
6. Համարվում է, որ տոկոսներն առաջանում են Պայմանավորվող Պետությունում, եթե վճարողն այդ Պետության ռեզիդենտն է: Սակայն եթե տոկոսներ վճարող անձը, անկախ այն բանից՝ Պայմանավորվող Պետության ռեզիդենտ է թե ոչ, մշտական հաստատություն կամ մշտական բազա ունի Պայմանավորվող Պետությունում, որոնց առնչությամբ առաջացել է պարտքը, որի տոկոսները վճարվում են, և այդ տոկոսների վճարման ծախսերը կատարում է նման մշտական հաստատությունը կամ մշտական բազան, ապա համարվում է, որ նման տոկոսները առաջանում են այն Պետությունում, որտեղ գտնվում են մշտական հաստատությունը կամ մշտական բազան:
7. Եթե վճարողի և տոկոսների փաստացի սեփականատերի, կամ նրանց երկուսի և որևէ երրորդ անձի միջև հատուկ հարաբերությունների պատճառով վճարման նպատակով հիմք ծառայող պարտապահանջին վերաբերվող տոկոսների գումարը գերազանցում է այն գումարը, որը կհամաձայնեցվեր վճարողի և տոկոսների փաստացի սեփականատիրոջ միջև նման հարաբերությունների բացակայության դեպքում, ապա սույն Հոդվածի դրույթները կիրառվում են միայն վերջին հիշատակված գումարի նկատմամբ: Այդ դեպքում վճարի ավելյուկային մասը կմնա հարկման ենթակա Պայմանավորվող Պետություններից յուրաքանչյուրի օրենքներին համապատասխան՝ հաշվի առնելով սույն Կոնվենցիայի մյուս դրույթները:

**Հոդված 12**  
**ՈՌՅԱԼԹԻ**

1. Պայմանավորվող Պետությունում առաջացող և մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտին վճարվող ռոյալթին կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:
2. Սակայն նման ռոյալթին կարող է հարկվել նաև այն Պայմանավորվող Պետությունում, որտեղ դրանք առաջանում են համապատասխան այդ Պետության օրենքներին, սա-

կայն եթե ռոյալթիի փաստացի սեփականատերը համարվում է մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտ, ապա այդ ձևով գանձվող հարկը չպետք է գերազանցի ռոյալթիի համախառն գումարի 10%-ը:

3. «Ռոյալթի» տերմինը սույն Հոդվածում կիրառելիս նշանակում է փոխհատուցման տեսքով ցանկացած տեսակի վճարումների՝ ստացված որպես գրականության, արվեստի կամ գիտության ստեղծագործությունների (ներառյալ կինոֆիլմերը, ռադիո կամ հեռուստատեսային հաղորդումների հեռարձակման համար ֆիլմերը կամ ձայնագրությունները) օգտագործման կամ օգտագործման իրավունքի համար ցանկացած հեղինակային իրավունքներից, ցանկացած պատենտների, ապրանքանիշի, դիզայնի կամ մոդելի, պլանի, գաղտնի բանաձևի կամ գործընթացի, կամ արդյունաբերական, առևտրային կամ գիտական սարքավորման օգտագործման կամ օգտագործման իրավունքի տրամադրման համար, կամ արդյունաբերական, առևտրային կամ գիտական փորձի վերաբերյալ տեղեկության համար:
4. 1 և 2 կետերի դրույթները չեն կիրառվում, եթե ռոյալթիի փաստացի սեփականատերը, լիներով Պայմանավորվող Պետության ռեզիդենտ, գործունեություն է իրականացնում ռոյալթիի աղբյուր հանդիսացող մյուս Պայմանավորվող Պետությունում գտնվող մշտական հաստատության միջոցով, կամ այդ մյուս Պետությունում անկախ անձնական ծառայություններ է մատուցում այնտեղ գտնվող մշտական բազայի միջոցով, և իրավունքը կամ գույքը, որոնց նկատմամբ վճարվում է ռոյալթին, հիրավի կապված են այդպիսի մշտական հաստատության կամ մշտական բազայի հետ: Այդ դեպքում, ելնելով հանգամանքներից, կիրառվում են 7 (Չեռնարկատիրական շահույթ) կամ 14 (Անկախ անձնական ծառայություններ) Հոդվածների դրույթները:
5. Համարվում է, որ ռոյալթին առաջանում է Պայմանավորվող Պետությունում, եթե վճարողը այդ Պետության ռեզիդենտն է: Սակայն եթե ռոյալթի վճարող անձը, անկախ այն բանից՝ Պայմանավորվող Պետության ռեզիդենտ է թե ոչ, Պայմանավորվող Պետությունում ունի մշտական հաստատություն կամ մշտական բազա, որի կապակցությամբ ռոյալթիի վճարելու պարտավորություն է առաջացել և այդ ռոյալթիի վճարման ծախսերը կրում են այդ մշտական հաստատությունը կամ մշտական բազան, ապա համարվում է, որ ռոյալթին առաջանում է այն Պետությունում, որտեղ գտնվում են մշտական հաստատությունը կամ մշտական բազան:
6. Եթե վճարողի և փաստացի սեփականատերի միջև կամ նրանց երկուսի և երրորդ անձի միջև հատուկ հարաբերությունների պատճառով վճարման համար հինք ծառայող օգտագործմանը, իրավունքին կամ տեղեկատվությանը վերաբերվող ռոյալթիի գումարը գերազանցում է այն գումարը, որը համաձայնեցված կլիներ վճարողի և փաստացի սեփականատիրոջ միջև այդպիսի հարաբերությունների բացակայության դեպքում, ապա սույն Հոդվածի դրույթները կիրառվում են միայն վերջին հիշատակված գումարի նկատմամբ: Այդ դեպքում վճարի ավելյուկային մասն կմնա հարկման ենթակա Պայմանավորվող Պետություններից յուրաքանչյուրի օրենքներին համապատասխան, պատշաճ կերպով հաշվի առնելով սույն Կոնվենցիայի մյուս դրույթները:

### **Նոդված 13**

#### **ԳՈՒՅՔԻ ԱՐԺԵՔԻ ՆԱԿԵԼԱՃԸ**

1. Պայմանավորվող Պետության ռեզիդենտի մյուս Պայմանավորվող Պետությունում գտնվող և 6 Հոդվածում (Եկամուտներ անշաժ գույքից) սահմանված անշարժ գույքի օտարումից ստացված արժեքի հավելաճը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:
2. Պայմանավորվող Պետության ռեզիդենտի կողմից ընկերության, որի ակտիվները հիմնականում կազմված են մյուս Պայմանավորվող Պետությունում գտնվող և 6 Հոդվածում

(Եկամուտներ անշաժ գույքից) սահմանված անշարժ գույքից, բաժնետոմսերի օտարումից ստացված արժեքի հավելանճը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

3. Պայմանավորվող Պետության ձեռնարկության տնօրինության տակ գտնվող և մյուս Պայմանավորվող Պետությունում մշտական հաստատության ձեռնարկատիրական գույքի մաս կազմող կամ անկախ ծառայությունների մատուցման համար Պայմանավորվող Պետության ռեզիդենտի տնօրինության տակ գտնվող և մյուս Պայմանավորվող Պետությունում մշտական բազային վերաբերվող շարժական գույքի օտարումից առաջացած եկամուտները, ներառյալ նման մշտական հաստատության (առանձին կամ ամբողջ ձեռնարկության հետ մեկտեղ) կամ նման մշտական բազայի օտարումից առաջացած նման եկամուտները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:
4. Միջազգային փոխադրումներում Պայմանավորվող Պետության ձեռնարկության կողմից շահագործվող օդանավի կամ նման օդանավի շահագործման հետ կապված շարժական գույքի օտարումից առաջացած եկամուտները հարկվում են միայն այդ Պետությունում:
5. 1, 2, 3 և 4 կետերում չնշված ցանկացած այլ գույքի օտարումից առաջացած եկամուտները հարկվում են միայն այն Պայմանավորվող Պետությունում, որի ռեզիդենտն է հանդիսանում գույքը օտարող անձը:

#### **Շողված 14**

##### **ԱՆԿԱՆ ԱՆՁՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. Եկամուտը, որ Պայմանավորվող Պետության ռեզիդենտ հանդիսացող ֆիզիկական անձը ստանում է մասնագիտական ծառայությունների մատուցումից կամ այլ անկախ բնույթի գործունեությունից հարկվում է միայն այդ Պետությունում, բացառությամբ այն դեպքի, երբ նա մյուս Պայմանավորվող Պետությունում ունի մշտական բազա (իր գործունեությունն իրականացնելու համար կանոնավար օգտագործվող մշտական վայր): Եթե նա ունի նման մշտական բազա, ապա եկամուտը կարող է հարկվել մյուս Պայմանավորվող Պետությունում, բայց միայն այդ մշտական բազային վերաբերվող մասով: Այդ նպատակների համար, եթե Պայմանավորվող Պետության ռեզիդենտ հանդիսացող ֆիզիկական անձը գտնվում է մյուս Պայմանավորվող Պետությունում ընդհանուր առմամբ 183 օրը չգերազանցող ժամանակահատվածում կամ ժամանակահատվածներում՝ ցանկացած 12-ամսյա ժամկետում, որը սկսվում կամ վերջանում է ֆինանսական տարում, ապա կհամարվի, որ նա այդ Պետությունում ունի կանոնավար օգտագործվող մշտական բազա և այդ մյուս Պետությունում իրականացվող իր, վերը նշված, գործունեությունից ստացվող եկամուտը վերաբերվում է այդ մշտական բազային:
2. «Մասնագիտական ծառայություններ» տերմինը ներառում է մասնավորապես, անկախ գիտական, գրական, արվեստաբանական, կրթական կամ դասախոսական գործունեություն, ինչպես նաև բժիշկների, իրավաբանների, ինժեներների, ճարտարապետների, ատամնաբույժերի և հաշվապահների անկախ գործունեություն:

#### **Շողված 15**

##### **ԿԱՆՅԱԼ ԱՆՁՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. Հաշվի առնելով 16 (Տնօրենների պատվավճարները), 18 (Կենսաթոշակներ) և 19 (Պետական ծառայություն) Հոդվածների դրույթները, ռոճիկը, աշխատավարձը և նման այլ վարձատրությունները, որոնք Պայմանավորվող Պետության ռեզիդենտը ստանում է վարձու աշխատանքի դիմաց, հարկվում են միայն այդ Պետությունում, եթե միայն վարձու աշխատանքը չի իրականացվում մյուս Պայմանավորվող Պետությունում: Եթե վար-

ծու աշխատանքը իրականացվում է նման ձևով, ապա այդ առնչությամբ ստացված վարձատրությունները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Չնայած 1 կետի դրույթների, Պայմանավորվող Պետության ռեզիդենտի ստացած վարձատրությունը մյուս Պայմանավորվող Պետությունում իրականացվող վարձու աշխատանքի դիմաց, հարկվում է միայն առաջին հիշատակված Պետությունում, եթե.
  - a) ստացողը գտնվում է մյուս Պետությունում ընդհանուր առմամբ 183 օրը չգերազանցող ժամանակահատվածում կամ ժամանակահատվածներում՝ ցանկացած 12-ամսյա ժամկետում, որը սկսվում կամ վերջանում է ֆինանսական տարում, և
  - b) վարձատրությունը կատարվում է այդ մյուս Պետության ռեզիդենտ չհանդիսացող վարձողի կողմից կամ վարձողի անունից, և
  - c) վարձատրությունների վճարման ծախսերը չեն կրում այդ մյուս Պետությունում վարձողի ունեցած մշտական հաստատությունը կամ մշտական բազան:
3. Անկախ սույն Հոդվածի նախորդ դրույթներից, միջազգային փոխադրումներում Պայմանավորվող Պետության ձեռնարկության կողմից շահագործվող օդանավերում իրականացվող վարձու աշխատանքի հետ կապված վարձատրությունը կարող է հարկվել այդ Պետությունում:

## **Հոդված 16** **ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ՀՈՆՈՐԱՐՆԵՐԸ**

Տնօրենների հոնորարները և այլ նույնատիպ վարձատրությունները, որոնք Պայմանավորվող Պետության ռեզիդենտը ստանում է որպես մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերության տնօրենների խորհրդի կամ ցանկացած այլ նույնատիպ մարմնի անդամ, կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

## **Հոդված 17** **ԱՐՎԵՍՏԻ ԱՅՆԱՏՈՂՆԵՐԸ ԵՎ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ**

1. Անկախ 14 (Անկախ անձնական ծառայություններ) և 15 (Կախյալ անձնական ծառայություններ) Հոդվածների դրույթներից, այն եկամուտը, որը Պայմանավորվող Պետության ռեզիդենտը ստանում է որպես արվեստի աշխատող, ինչպիսին է թատրոնի, կինոյի, ռադիոյի կամ հեռուստատեսության արտիստը, կամ երաժիշտը, կամ որպես մարզիկ մյուս Պայմանավորվող Պետությունում իրականացվող, որպես այդպիսին, իր անձնական գործունեությունից, կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:
2. Եթե արվեստի աշխատողի կամ մարզիկի, որպես այդպիսին, իրականացվող անձնական գործունեության եկամուտը վերագրվում է ոչ թե անմիջապես արվեստի աշխատողին կամ մարզիկին, այլ մեկ ուրիշ անձին, ապա, անկախ 7 (Չեռնարկատիրական շահույթ), 14 (Անկախ անձնական ծառայություններ) և 15 (Կախյալ անձնական ծառայություններ) Հոդվածների դրույթներից, այդ եկամուտը կարող է հարկվել այն Պայմանավորվող Պետությունում, որտեղ արվեստի աշխատողը կամ մարզիկը իրականացնում է այդ գործունեությունը:
3. 1 և 2 կետերի դրույթները չեն վերաբերվում այն եկամուտին, որը արվեստի աշխատողները կամ մարզիկները ստանում են Պայմանավորվող Պետությունում իրականացվող գործունեությունից, եթե այդ Պետության այցելությունը ամբողջովին կամ մասամբ ֆինանսավորվում է Պայմանավորվող Պետություններից մեկի կամ երկուսի, կամ տեղական իշխանության մարմինների հասարակական հիմնադրամներից: Այդ դեպքում եկամուտը հարկվում է միայն այն Պայմանավորվող Պետությունում, որի ռեզիդենտ է համարվում արվեստի աշխատողը կամ մարզիկը:

## **Հողված 18**

### **ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ**

Հաշվի առնելով 19 Հողվածի (Պետական ծառայություն) 2 կետի դրույթները Պայմանավորվող Պետության ռեզիդենտին վճարվող կենսաթոշակները և այլ համանման վարձատրությունները (ներառյալ սոցիալական ապահովության օրենսդրությամբ վճարվող կենսաթոշակները և այլ համանման վարձատրությունները)՝ կապված նրա նախկին վարձու աշխատանքի հետ, հարկվում են միայն այդ Պետությունում:

## **Հողված 19**

### **ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ**

1. a) Պայմանավորվող Պետության կամ իշխանության տեղական մարմնի կողմից ֆիզիկական անձին՝ այդ Պետության կամ իշխանության տեղական մարմնին մատուցած ծառայությունների դիմաց, կենսաթոշակից բացի, վճարված ռոճիկը, աշխատավարձը կամ այլ նմանատիպ վարձատրությունը, հարկվում է միայն այդ Պետությունում:  
b) Սակայն նման ռոճիկը, աշխատավարձը կամ այլ նմանատիպ վարձատրությունը հարկվում է միայն մյուս Պայմանավորվող Պետությունում, եթե ծառայությունները մատուցվում են այդ Պետությունում և այդ Պետության ռեզիդենտ հանդիսացող ֆիզիկական անձը.  
(i) հանդիսանում է այդ Պետության ազգային անձ, կամ  
(ii) չի դարձել այդ Պետության ռեզիդենտը միայն ծառայություններ մատուցելու նպատակով:
2. a) Պայմանավորվող Պետության կամ իշխանության տեղական մարմնի, կամ նրանց կողմից ստեղծված հիմնադրամներից ֆիզիկական անձին՝ այդ Պետությանը կամ իշխանության մարմնին մատուցած ծառայությունների դիմաց, վճարված ցանկացած կենսաթոշակ հարկվում է միայն այդ Պետությունում:  
b) Սակայն, նման կենսաթոշակը հարկվում է միայն մյուս Պայմանավորվող Պետությունում, եթե ֆիզիկական անձը հանդիսանում է այդ Պետության ռեզիդենտ ու ազգային անձ:
3. 15 (Կախյալ անձնական ծառայություններ), 16 (Տնօրենների հոնորարները) և 18 (Կենսաթոշակներ) Հողվածների դրույթները կկիրառվեն այն ռոճիկի, աշխատավարձի կամ այլ նմանատիպ վարձատրությունների ու կենսաթոշակների նկատմամբ, որոնք կապված են Պայմանավորվող Պետության կամ իշխանության տեղական մարմնի կողմից իրականացվող գործունեության հետ:

## **Հողված 20**

### **ՈՒՄԱՆՈՂՆԵՐ**

Մինչև անմիջականորեն Պայմանավորվող Պետություն ժամանելը մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտ հանդիսացող և առաջին հիշատակված Պետությունում բացառապես ուսանելու կամ կրթություն ստանալու նպատակով գտնվող ուսանողի, պրակտիկանտի կամ ստաժորի կողմից ստացվող վճարումները՝ նախատեսված ապրելու, ուսանելու կամ կրթություն ստանալու համար, չեն հարկվում առաջին հիշատակված Պետությունում, եթե այդ վճարումների աղբյուրները գտնվում են այդ Պետության սահմաններից դուրս:

## **Հողված 21**

### **ԱՅԼ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ**

1. Պայմանավորվող Պետության ռեզիդենտի եկամուտների՝ սույն Համաձայնագրի նախորդ Հոդվածներում չհիշատակված, տեսակները, անկախ նրանց առաջապան աղբյուրից, հարկվում են միայն այդ Պետությունում:
2. 1 կետի դրույթները չեն կիրառվում 6 Հոդվածի (Եկամուտներ անշարժ գույքից) 2 կետում սահմանված անշարժ գույքի եկամուտներից տարբեր այլ եկամուտների նկատմամբ, եթե նման եկամուտներ ստացողը լինելով Պայմանավորվող Պետության ռեզիդենտ մյուս Պայմանավորվող Պետությունում գործունեություն է իրականացնում այնտեղ տեղակայված մշտական հաստատության միջոցով, կամ այդ մյուս Պետությունում մատուցում է անկախ անձնական ծառայություններ այնտեղ գտնվող մշտական բազայի միջոցով, և իրավունքը կամ գույքը, որոնց առնչությամբ ստացվել է եկամուտը, հիրավի կապված է այդպիսի մշտական հաստատության կամ մշտական բազայի հետ: Այդ դեպքում, հանգամանքներից ելնելով, կիրառվում են 7 (Չեռնարկատիրական շահույթ) կամ 14 (Անկախ անձնական ծառայություններ) Հոդվածների դրույթները:

## **ՉԼՈՒՄ IV**

### **ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿՈՒՄԸ**

## **Հողված 22**

### **ԳՈՒՅՔ**

1. Պայմանավորվող Պետության ռեզիդենտի սեփականություն հանդիսացող և մյուս Պայմանավորվող Պետությունում գտնվող անշարժ գույքով ներկայացված գույքը, որի մասին հիշատակվում է 6 Հոդվածում (Եկամուտներ անշարժ գույքից), կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:
2. Պայմանավորվող Պետության ձեռնարկության գույքը՝ ներկայացված մյուս Պայմանավորվող Պետությունում ունեցած մշտական հաստատության մաս կազմող ձեռնարկատիրական գույքով կամ Պայմանավորվող Պետության ռեզիդենտի տնօրինության տակ գտնվող և անկախ անձնական ծառայություններ մատուցելու նպատակով մյուս Պայմանավորվող Պետությունում տեղաբաշված մշտական բազայի հետ կապված շարժական գույքը, կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:
3. Գույքը, ներկայացված Պայմանավորվող Պետության ձեռնարկության կողմից միջազգային փոխադրումներում շահագործվող օդանավով և այդ օդանավի շահագործման հետ կապված շարժական գույքով, կարող է հարկվել միայն այդ Պետությունում:
4. Պայմանավորվող Պետության ռեզիդենտի գույքի մյուս բոլոր տարրերը հարկվում են միայն այդ Պետությունում:

## **ՉԼՈՒՄ V**

### **ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՄԱՆ ԿԵՐԱՑՄԱՆ ՄԵԹՈՂՆԵՐԸ**

## **Հողված 23**

### **ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՄԱՆ ԿԵՐԱՑՈՒՄԸ**

1. Հայաստանի գեաքում կրկնակի հարկումը վերացվում է հետևյալ կերպ.
  - a) եթե Հայաստանի ռեզիդենտը եկամուտ է ստանում կամ գույք է տնօրինում, որոնք սույն Կոնվենցիային համաձայն կարող են հարկվել Լիտվայում, ապա Հայաստանը թույլ կտա.
    - i) այդ ռեզիդենտի եկամտահարկից հանել Լիտվայում վճարված եկամտահարկին հավասար գումար,

ii) այդ ռեզիդենտի գույքահարկից հանել Լիտվայում վճարված գույքահարկին հավասար գումար:

Սակայն այդ հանումները, երկու դեպքում էլ՝ կախված հանգամանքներից, չպետք է գերազանցեն եկամտահարկի կամ գույքահարկի հաշվարկված մասը՝ մինչև Լիտվայում հարկման ենթակա եկամուտին կամ գույքին վերաբերվող հանման տրամադրումը:

2. Լիտվայի դեպքում կրկնակի հարկումը վերացվում է հետևյալ կերպ.

եթե Լիտվայի ռեզիդենտը եկամուտ է ստանում կամ գույք է տնօրինում, որոնք սույն Կոնվենցիային համաձայն կարող են հարկվել Հայաստանում, չնայած նույնիսկ, եթե նրա ներքին օրենքներով տրամադրվում են ավելի բարենպաստ պայմաններ, Լիտվան թույլ կտա.

a) այդ ռեզիդենտի եկամտահարկից հանել Հայաստանում վճարված եկամտահարկին հավասար գումար,

b) այդ ռեզիդենտի գույքահարկից հանել Հայաստանում վճարված գույքահարկին հավասար գումար:

Սակայն այդ հանումները, երկու դեպքում էլ՝ կախված հանգամանքներից, չպետք է գերազանցեն Լիտվայում եկամտահարկի կամ գույքահարկի հաշվարկված մասը՝ մինչև Հայաստանում հարկման ենթակա եկամուտին կամ գույքին վերաբերվող հանման տրամադրումը,:

b) երբ սույն Կոնվենցիայի ցայկայցած դրույթին համապատասխան Հայաստանի ռեզիդենտի ստացած եկամուտը կամ տնօրինած գույքը Հայաստանում հարկումից ազատված է, այնուամենայնիվ մնան ռեզիդենտի եկամուտի կամ գույքի մնացած մասի վրա դրվող հարկի գումարը հաշվարկելիս Հայաստանը կարող է հաշվի առնել հարկումից ազատված եկամուտը կամ գույքը:

## **ՉԼՈՒՄ VI**

### **ՀԱՏՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

#### **Հոդված 24**

#### **ԱՆԽՏՐԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. Պայմանավորվող Պետության ազգային անձինք մյուս Պայմանավորվող Պետությունում չեն ենթարկվի այլ կամ ավելի ծանր հարկման կամ դրա հետ կապված պարտավորությանը, քան այն հարկումը կամ դրա հետ կապված պարտավորությունը, որին ենթարկվում են այդ մյուս Պետության ազգային անձինք նույն հանգամանքների դեպքում, մասնավորապես ռեզիդենտության առումով: Այս դրույթը, չնայած 1 Հոդվածի (Անձինք ուն մկատմամբ կիրառվում է Կոնվենցիան) դրույթներին, կիրառվում է նաև Պայմանավորվող Պետություններից մեկի կամ երկուսի ռեզիդենտ չհանդիսացող ֆիզիկական անձանց նկատմամբ:
2. Պայմանավորվող Պետության ռեզիդենտ հանդիսացող, քաղաքացիություն չունեցող անձինք Պայմանավորվող Պետություններից և ոչ մեկում չպետք է ենթարկվեն այլ կամ ավելի ծանր հարկման կամ դրա հետ կապված պարտավորությանը, քան այն հարկումը կամ դրա հետ կապված պարտավորությունը, որին ենթարկվում են այդ Պետությունների ազգային անձինք նույն հանգամանքների դեպքում, մասնավորապես ռեզիդենտության առումով:
3. Պայմանավորվող Պետության ձեռնարկության մյուս Պայմանավորվող Պետությունում ունեցած մշտական հաստատության հարկումը այդ մյուս Պետությունում չպետք է նվազ բարենպաստ լինի, քան այդ մյուս Պետությունում համանման գործունեություն իրական-

նացնող ձեռնարկությունների հարկումը: Այս դրույթը չպետք է մեկնաբանվի որպես պարտավորեցնող Պայմանավորվող Պետությանը մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտներին հարկման նպատակների համար տրամադրելու որևէ անձնական արտոնություններ, հարկային հանումներ և գեղջեր նրանց քաղաքացիական կարգավիճակի կամ ընտանեկան հանգամանքների հիման վրա, որոնք նա տրամադրում է իր սեփական ռեզիդենտներին:

4. Բացառությամբ այն դեպքերի, երբ կիրառվում են 9 Հոդվածի (Ասոցիացված (գուգորդված) ձեռնարկությունները) 1 կետի, 11 Հոդվածի (Տոկոսներ) 7 կետի կամ 12 Հոդվածի (Ռոյալթի) 6 կետի դրույթները, Պայմանավորվող Պետության ձեռնարկության կողմից մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտին վճարվող տոկոսները, ռոյալթին կամ այլ կատարած վճարումները, պետք է մնան ձեռնարկության հարկվող շահույթի որոշման նպատակով ենթակա լինեն համանման այն նույն պայմաններով, ինչպես առաջին հիշատակված Պետության ռեզիդենտին վճարելիս: Նմանապես Պայմանավորվող Պետության ձեռնարկության մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտին ցանկացած պարտք, այդ ձեռնարկության հարկվող գույքի որոշման նպատակով պետք է ենթակա լինի համանման, այն նույն պայմաններով, որն է պարտքը առաջին հիշատակված Պետության ռեզիդենտին:
5. Պայմանավորվող Պետության ձեռնարկությունները, որոնց գույքը լրիվ կամ մասնակիորեն պատկանում է մեկ կամ մի քանի ռեզիդենտների, կամ ուղղակի կամ անուղղակի վերահսկվում է մյուս Պայմանավորվող Պետության մեկ կամ մի քանի ռեզիդենտների կողմից, չպետք է առաջին հիշատակված Պետությունում ենթարկվեն այլ կամ ավելի ծանր հարկման կամ նրա հետ կապված պարտավորության, քան այն հարկումը կամ դրա հետ կապված պարտավորությունը, որին կարող են ենթարկվել առաջին հիշատակված Պետության այլ համանման ձեռնարկություններ:
6. Չնայած 2 Հոդվածի (Ընդգրկվող հարկեր) դրույթներին, սույն Հոդվածի դրույթները կկիրառվեն հարկերի յուրաքանչյուր տեսակի կամ ձևի նկատմամբ:

## **Հոդված 25**

### **ՓՈՒՆԸԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ ԱՐԱՐՈՂԱԿԱՐԳԸ**

1. Եթե անձը գտնում է, որ Պայմանավորվող Պետություններից մեկի կամ երկուսի գործողությունները հանգեցնում են կամ կհանգեցնեն սույն Կոնվենցիայի դրույթներին չհամապատասխանող հարկմանը, ապա նա կարող է, այդ Պետությունների ազգային օրենքով նախատեսված պաշտպանական միջոցներից անկախ, քննարկման համար իր գործը ներկայացնել այն Պայմանավորվող Պետության իրավասու մարմնին, որի ռեզիդենտն է ինքը, կամ, եթե դեպքը վերաբերում է 24 Հոդվածի (Անխտրականություն) 1 կետին, այն Պետության իրավասու մարմնին, որի ազգային անձն է նա: Դիմումը պետք է ներկայացվի երեք տարվա ընթացքում՝ Կոնվենցիայի դրույթներին չհամապատասխանող հարկմանը հանգեցնող գործողությունների մասին առաջին ժամույցման պահից:
2. Եթե իրավասու մարմինը դիմումը համարի հիմնավորված կամ եթե ինքը ի վիճակի չէ հանգելու գոհացուցիչ որոշման, կձգտի հարցը լուծել մյուս Պայմանավորվող Պետության իրավասու մարմնի հետ փոխհամաձայնությամբ, նպատակ ունենալով բացառել Կոնվենցիային չհամապատասխանող հարկումը: Ցանկացած ձեռք բերված պայմանավորվածություն պետք է կատարվի անկախ Պայմանավորվող Պետությունների ազգային օրենքում առկա որևէ ժամանակային սահմանափակումներից:
3. Պայմանավորվող Պետությունների իրավասու մարմինները փոխհամաձայնությամբ կձգտեն լուծել բոլոր դժվարությունները կամ կասկածները, որոնք կարող են առաջանալ



Կոնվենցիայի մեկնաբանման կամ կիրառման ժամանակ: Նրանք կարող են նաև, Կոնվենցիայով չնախատեսված դեպքերում, համատեղ խորհրդակցել՝ կրկնակի հարկումը բացառելու նպատակով:

4. Պայմանավորվող Պետությունների իրավասու մարմինները կարող են անմիջական կապ հաստատել միմյանց հետ՝ նախորդ կետերի ըմբռնման նպատակով համաձայնության հասնելու:

#### **Հոդված 26**

#### **ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ**

1. Պայմանավորվող Պետությունների իրավասու մարմինները փոխանակվում են տեղեկատվությամբ՝ անհրաժեշտ սույն Կոնվենցիայի կամ Պայմանավորվող Պետությունների ազգային օրենքների դրույթների կատարման համար, այն հարկերի վերաբերյալ, որոնց վրա տարածվում է Կոնվենցիան այն չափով, որքանով հարկումը չի հակասում Կոնվենցիային: Տեղեկատվության փոխանակումը չի սահմանափակվում 1 Հոդվածով (Անձինք, ում նկատմամբ կիրառվում է Կոնվենցիան): Պայմանավորվող Պետության կողմից ստացված ցանկացած տեղեկատվություն համարվում է գաղտնի այնքանով, որքանով այդ Պետության ազգային օրենքների շրջանակում ստացված տեղեկատվությունն է, և տեղեկացվում է միայն այն անձանց կամ մարմիններին (ներառյալ դատարանները և վարչական մարմինները), որոնք զբաղված են այն հարկերի գնահատմամբ կամ հավաքագրումով, բռնագանձմամբ կամ դատական հետապնդումով, կամ բողոքարկումների քննարկմամբ, որոնց վրա տարածվում է Կոնվենցիան: Ստացված տեղեկատվությունը նման անձինք կամ մարմինները պետք է օգտագործեն միայն այդպիսի նպատակների համար: Նրանք կարող են հրապարակել տեղեկատվությունը դրանքայ դատական միստի ընթացքում կամ դատական որոշումներ ընդունելիս:
2. 1 կետի դրույթները և ոչ մի դեպքում չեն մեկնաբանվի որպես Պայմանավորվող Պետություններին պարտավորեցնող.
  - a) անցկացնելու այդ կամ մյուս Պայմանավորվող Պետության օրենքներին կամ վարչական գործավարությանը հակասող վարչական միջոցառումներ,
  - b) ներկայացնելու տեղեկատվություն, որը չի կարելի ստանալ այդ կամ մյուս Պայմանավորվող Պետության օրենքներով կամ սովորական վարչական գործավարության ընթացքում,
  - c) ներկայացնելու տեղեկատվություն, որը կբացահայտի որևէ առևտրական, ձեռնարկատիրական, արդյունաբերական, առևտրային կամ մասնագիտական գաղտնիք կամ առևտրական գործընթաց, կամ տեղեկատվություն, որի բացահայտումը կհակասի պետական քաղաքականությանը (հասարակական կարգին):
3. Պայմանավորվող Պետությունների իրավասու մարմինները կարող են կնքել լրացուցիչ համաձայնագիր՝ սույն Հոդվածի դրույթների կատարման համար անհրաժեշտ միջոցառումների սահմանման նպատակով:

#### **Հոդված 27**

#### **ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԸՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ՎԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ**

Սույն Կոնվենցիայի և ոչ մի դրույթ չի շոշափում դիվանագիտական առաքելությունների և հյուպատոսական ծառայողների հարկային արտոնությունները, որոնք սահմանված են միջազգային իրավունքի ընդհանուր նորմերով կամ հատուկ համաձայնագրի դրույթներով:

## **ԳԼՈՒԽ VII ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅՑՆԵՐ**

### **Շողված 28 ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ**

1. Պայմանավորվող Պետությունները մեկը մյուսին կիրազեկեն սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ սահմանադրական պահանջները կատարելու մասին:
2. Կոնվենցիան ուժի մեջ է մտնում 1 կետում նշված ծանուցագրերից վերջինիս ուղարկելու օրվանից և նրա դրույթները երկու Պայմանավորվող Պետություններում կիրառվում են.
  - a) աղբյուրից գանձվող հարկերի առնչությամբ՝ Կոնվենցիան ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող օրացույցային տարվա հունվարի 1 կամ հունվարի 1 հետո գանձվող գումարներից,
  - b) եկամուտներից և գույքից գանձվող այլ հարկերի առնչությամբ՝ Կոնվենցիան ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող օրացույցային տարվա հունվարի 1 կամ հունվարի 1 հետո հաշվարկվող հարկերի նկատմամբ:

### **Շողված 29 ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱՂԱՐԵՅՈՒՄԸ**

Սույն Կոնվենցիան մնում է ուժի մեջ մինչև Պայմանավորվող Պետություններից մեկի կողմից նրա գործողության դադարեցումը: Պայմանավորվող Պետություններից յուրաքանչյուրը կարող է դիվանագիտական ուղիներով գործողությունը դադարեցնելու մասին գրավոր ծանուցագիր հանձնելու միջոցով դադարեցնել Կոնվենցիայի գործողությունը՝ ուժի մեջ մտնելու պահից երեք տարին անցնելուց հետո ցանկացած օրացույցային տարվա ավարտից առնվազն վեց ամիս առաջ: Այդ դեպքում Կոնվենցիան երկու Պայմանավորվող Պետություններում դադարեցնում է գործողությունը:

- a) աղբյուրից գանձվող հարկերի առնչությամբ՝ ծանուցագիրը փոխանցելու տարվան հաջորդող օրացույցային տարվա հունվարի 1 կամ հունվարի 1 հետո գանձվող գումարների նկատմամբ,
- b) եկամուտներից և գույքից գանձվող այլ հարկերի առնչությամբ՝ ծանուցագիրը փոխանցելու տարվան հաջորդող օրացույցային տարվա հունվարի 1 կամ հունվարի 1 հետո հաշվարկված հարկերի նկատմամբ:

Ի ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ ՈՐԻ համապատասխան ձևով լիազորված ներքստորագրողներս ստորագրեցինք սույն Կոնվենցիան:

Կատարվել է Վիլնյուս քաղաքում 2000 թվականի մարտի «13»-ին, հայերեն, լիտվերեն և անգլերեն, ընդ որում բոլոր երեք տեքստերն էլ հավասարազոր են: Մեկնաբանման ժամանակ տարաձայնությունների դեպքում զերակայում է անգլերեն տեքստը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ  
ԼԻՏՎԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Լիտվայի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկերի վճարումից խուսափելը կանխելու մասին Կոնվենցիան կնքելիս ներքոստորագրողները պայմանավորվեցին, որ ներքոհիշյալ դրույթները կազմում են Կոնվենցիայի անբաժան մասը.

1. 4 Հոդվածի (Ռեզիդենտ) 3 կետի առնչությամբ.

Պայմանավորված է, որ Պայմանավորվող Պետությունների իրավասու մարմինների միջև համաձայնության բացակայության դեպքում անձը յուրաքանչյուր Պայմանավորվող Պետությունում չի դիտարկվի որպես մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտ:

2. 7 Հոդվածի (Ձեռնարկատիրական շահույթ) 3 կետի առնչությամբ.

Պայմանավորված է, որ Պայմանավորվող Պետության կողմից որպես հանումներ թույլատրվող ծախսերը կներառեն միայն այն ծախսերը, որոնք ենթակա են հանման համաձայն այդ Պետության ներքին օրենքների:

Ի ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ ՈՐԻ համապատասխան ձևով լիազորված ներքոստորագրողներս ստորագրեցինք սույն Կոնվենցիան:

Կատարվել է Վիլնյուս քաղաքում 2000 թվականի մարտի «13»-ին, հայերեն, լիտվերեն և անգլերեն, ընդ որում բոլոր երեք տեքստերն էլ հավասարազոր են: Մեկնաբանման ժամանակ տարաձայնությունների դեպքում գերակայում է անգլերեն տեքստը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

ԼԻՏՎԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ